ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

ԵԿԴ/1671/02/12 քաղաքացիական գործով
դատարանի կոզմին, նախագահող
դատավոր՝ Մ. Հարթենյանին

Բողոքբերող անձ՝
Հայցվոր՝
«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
հասարակական կազմակերպության
Ներկայացուցիչ, փաստաբան՝
Կարեն Մեժլումյան
Արտոնագիր՝ 110
Հասցե՝ Երևան, Մաշտոցի 33/1, 12 տարածք
Հեռախոս՝ 50-18-08, 077-073-073
e-mail: karen.mezhlumyan@gmail.com

Գործին մասնակցող անձինք
Պատասխանողներ՝
ՀՀ կառավարության
Հասցե՝ Երևան, Հանրապետության
Հրապարակ, Կառավարական տուն 1

Ի դեմս

ՀՀ ֆինանսների նախարարության
Հասցե՝ Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

և

ՀՀ բնապահպանության նախարարության
«Բնապահպանական ծրագրերի
իրականացման գրասենյակ» պետական
հիմնարի
Հասցե՝ Երևան 0047, Ա. Արմենակյան 129

Բողոքարկվող դատական ակտ՝
ԵԿԴ/1671/02/12 քաղաքացիական գործով
02.10.2014թ. վճիռ

08.12.2014թ.

Վ Ե Ր Ա Քն Ն Ի Չ Բ Ո Ղ Ո Ք

Նյութական և դատավարական իրավունքի խախտման հիմքով

1. Գործի դատավարական նախապատմությունը

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը քննելով թիվ ԵԿԴ/1671/02/12 քաղաքացիական գործն ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի, ՀՀ-ի՝ ի դեմս կառավարության, ՀՀ ֆինանսների նախարարության՝ տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը ճանաչելու, տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու, դատական

ծախսերի գումարի բռնագանձման պահանջների մասին 02.10.2014թ. վճռով հայցը մերժել է:

Վճռի դեմ սահմանված ժամկետում բերվել է վերաքննիչ բողոք:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը բողոքը 17.11.2014թ. որոշմամբ վերադարձրել է, պատճառաբանությամբ, որ վճարված չէ պետական տուրքը, կողմերին և վճիռ կայացրած դատարանին չի ուղարկվել բողոքի օրինակը, ինչպես նաև բողոքում նշված չեն նյութական և դատավարական իրավունքի այն խախտումները, որն ազդել է գործի ելքի վրա: Որոշումը ստացել եմ, այսինքն այն ստացած անձի կոմղից ինձ է հանձնվել 21.11.2014թ-ից հետո, ուստի սույն բողոքը բերում եմ իմ ստանալուց հետո սահմանված ժամկետում, սակայն եթե վերաքննիչ դատարանը կգտնի, որ սխալներն ուղղված բողոք բերելու համար ահմանված ժամկետը բաց եմ թողել, ապա այս դեպքում միջնորդում եմ բողոք բերելու համար բաց թողած ժամկետը հարգելի ճանաչել, քանի որ բողոքը բերվում է որոշումն ինձ հանձնելու հետո երկշաբաթյա ժամկետում:

2. Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Հայցվորը **Տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել** ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին խնդրելով «*տրամադրել հետևյալ տեղեկությունները:*

1. Ստացե՞լ են արդյոք պարգեւատրումներ (պարգեւավճարներ, նվերներ) "Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ" ՊՀ-ի աշխատակիցները 2011թ.-ին:

2. Եթե այո, ապա ովքե՞ր են պարգեւատրվել (ըստ հաստիքների) եւ ինչքա՞ն գումարով (ի՞նչ նվերով):

3. Որքա՞ն է կազմել "Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ" ՊՀ-ի աշխատակիցների ստացած դրամական պարգեւատրումների ընդհանուր գումարը,

4. Որքա՞ն է կազմել "Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ" ՊՀ-ի աշխատակիցների ստացած նվերներից յուրաքանչյուրի արժեքը եւ նվերների արժեքների ընդհանուր գումարը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում»:

2) ՊՀ-ն չի պատասխանել հետևյալ հարցին. «*ովքե՞ր են պարգեւատրվել (ըստ հաստիքների) եւ ինչքա՞ն գումարով (ի՞նչ նվերով)*»:

3) Հայցվորը և ՊՀ-ին և դատարանում պարզաբանել է, որ պատասխանում անհրաժեշտ չէ նշել պարգևատրում ստացած անձանց անունները, բավարար է նշել միայն հաստիքները:

4) «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն դատարանում նախորդ վարույթում համաձայնություն տվել է տրամադրել պահանջվող տեղեկատվությունը, պայմանով, որ մինչ այդ հայցվորը հայցից հրաժարվի:

5) Հայցվորը համաձայնել է հայցից հրաժարվել, սակայն տեղեկատվությունը ստանալուց հետո:

6) Կողմերը համաձայնության չեն եկել 4-րդ և 5-րդ կետերում նշված հարցի շուրջ:

7) Դատարանը դատական նիստի մասին չի ծանուցել հայցվոր իրավաբանական անձի փաստաբան ներկայացուցչին, թեև նախորդ վարույթներում հենց հայցվորի ներկայացուցիչն էր ծանուցվում դատական նիստերի մասին:

8) Չծանուցվելով դատական նիստի մասին, հայցվորի ներկայացուցիչը հնարավորություն չի ունեցել դատարանին ներկայացնել համանման վեճով ՀՀ ֆինանսների նախարարության հետ կնքված հաշտության համաձայնության տեքստն ու դրա հիման վրա տրված տեղեկատվությունը, որը նույնական է սույն գործով պահանջվող տեղեկատվության հետ:

3. Բողոքի փաստարկները

Բողոքում բարձրացվում է հետևյալ հարցը – պետական մարմնում աշխատող անձի անուն ազգանվան նշումը համարվում է արդյոք անհատական տվյալ և դրանով նույնականացվում է արդյոք այդ անձը:

Դատարանը հայցը մերժելով պատճառաբանել է, որ եթե պատասխանողը տեղեկատվություն տա այն մասին, թե «*ովքե՞ր են պարգեւատրվել (ըստ հաստիքների) եւ ինչքա՞ն գումարով (ի՞նչ նվերով)*», առանց ահնվան նշման, դրանով կխախտվի աշխատակիցների անձնական տվյալների գաղտնիության իրավունքը, քանի որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ եթե ՀՀ Սահմանադրությամբ և (կամ) օրենքով այլ բան նախատեսված չէ, ապա տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է հաստիքացուցակները, ինչպես նաև պաշտոնատար անձանց անունները, ազգանունները…» և տեղեկատվություն ստացած անձը այդ տեղեկատվությունը կհամադրի ամեն տարի հարապարակման ենթակա պաշտոնատար անձանց անունազգանունների հետ և կպարզի, թե ում աշխատավարձին հավասարեցված եկամուտը որքան է կազմում:

Ըստ դատարանի դրանով կխախտվի ՀՀ աշխատանքային օրենսգրքի 131, 134, 199 հոդվածներով, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8 հոդվածով և ՀՀ Սահմանադրության 23 հոդվածով ու ՄԻԵԿ 8-րդ հոդվածով երաշխավորված՝ անձնական կյանքի իրավունքը:

Դատարանը վերը նշված եզրահանգման է եկել վճռում բառացիորեն մեջբերելով պատասխանող Ֆինանսների նախարարության դիրքորոշումը:

Գտնում եմ, որ վճիռը կայացվել է նյութական և դատավարական իրավունքի խախտումներով և ենթակա է բեկանման հետևյալ պատճառաբանությամբ:

Պետական մարմնի կամ հիմնարկի հաստիքացուցակում նշված անձի անունն ու ազգանունը հրապարակելը չի կարող համարվել տվյալ անձի նույնականացում, ուստի այն, թե որոշակի հաստիքի աշխատակիցը որքան աշխատավարձ կամ պարգևատրում է ստացել, չի կարող համարվել անձնական տվյալի բացահայտում:

Այս կապակցությամբ նշեմ, որ մեկ այլ գործի շրջանակներում ՀՀ ֆինանսների նախարարությունը տրամադրել է նման տեղեկատվություն, որի վերաբերյալ ապացույցները ներկայացնում եմ դատարանին և խնդրում եմ դրանք ընդունել, քանի որ դրանք հնարավոր չի եղել ներկայացնել առաջին ատյանի դատարան այն պատճառով, որ դատական նիստի տեղի և ժամանակի մասին դատարանի կողմից տեղեկացված չեմ եղել:

Պատահական չէ, որ «Բնապահպանության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն էլ է պատրաստ եղել տրամադրել պահանջվող տեղեկատվությունը, ինչի մասին նշված է վճռում:

Բացի այդ, գտնում եմ, որ դատարանը սխալ է մեկնաբանել վերը նշված նորմերը, այդ թվում Օրենսգրքի 131-րդ հոդվածը, աշխատավարձը համարելով աշխատողի անձնական տվյալ:

Այսպես, դատարանի կողմից թվարկված Օրենսգրքի հոդվածներից ոչ մեկում նշված չէ, որ աշխատավարձը անձնական տվյալ է, իսկ Օրենսգրքի 131-րդ հոդվածն էլ սահմանում է. «*Աշխատողի անձնական տվյալները աշխատանքային հարաբերությունների հետ կապված և որոշակի աշխատողին վերաբերող՝* ***գործատուին անհրաժեշտ տեղեկություններն են:***

Աշխատողի անձնական տվյալների մշակում է համարվում աշխատողի անձնական տվյալներն ստանալը*, պաշտպանելը, համակարգելը, փոխանցելը կամ ցանկացած այլ կերպ օգտագործելը*»:

Ինչպես տեսնում ենք, անձնական տվյալները դրանք աշխատողին վերաբերող՝ գործատուին անհրաժեշտ տեղեկություններն են, իսկ դրա մշակումը, այդ տվյալների ստանալը և այլն է:

Գործատուի կողմից աշխատողին տրվող աշխատավարձը, որևէ կերպ չի

տեղավորվում նշված սահմանման մեջ:

Ավելին, եթե դատարանը կիրառեր Օրենսգրքի՝ կիրառման ենթակա 132 հոդվածը, որը չի կիրառել, ապա կպարզեր, որ. «*Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների ապահովման նպատակով գործատուն աշխատողի անձնական տվյալները մշակելիս պարտավոր է պահպանել հետևյալ պահանջները.*

3) <u>բոլոր անձնական տվյալները պետք է ստացվեն աշխատողից:</u> Եթե աշխատողի անձնական տվյալները հնարավոր է ստանալ միայն երրորդ անձից, ապա պետք է առկա լինի աշխատողի գրավոր համաձայնությունը: Գործատուն պարտավոր է աշխատողին տեղեկացնել անձնական տվյալների ստացման նպատակի, տվյալների ստացման հնարավոր միջոցների և աղբյուրների, ինչպես նաև ստացման ենթակա տվյալների բնույթի և աշխատողի կողմից դրանց ստացման գրավոր համաձայնություն տալը մերժելու հետևանքների մասին»:

Գործատուի կողմից աշխատողին վճարվող աշխատավարձի չափը, ուստի և դրան հավասարեցված պարգևավճարը, չի կարող գործատուի համար համարվել աշխատողից կամ աշխատողի գրավոր համաձայնությամբ երրորդ անձից ստացման ենթակա տվյալ, քանի որ այդ տվյալի աղբյուրը հենց գործատուն է, այն դեպքում, երբ, օրենքը հստակ է սահմանում, որ բոլոր անձնական տվյալները պետք է ստացվեն աշխատողից:

Այսպիսով, դատարանը սխալ է մեկնաբանել Օրենսգրքի 131-րդ հոդվածը և չի կիրառել 132-րդ հոդվածը, որը ենթակա էր կիրառման:

Վերոգրյալից ելնելով դատարանը խախտել է

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ եւս մեկ անգամ խնդրում ենք տրամադրել բաց թողնված վերոնշյալ տեղեկությունները»:

Այսպիսով դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 27 և 27.1, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3, 6, 9 հոդվածները, մերժելով պահանջվող տեղեկատվության տրամադրումը:

Դատարանը սխալ մեկնաբանությամբ կիրառելով խախտել է նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 131, 134, 199 հոդվածները, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8 հոդվածը և ՀՀ Սահմանադրության 23 հոդվածն ու ՄԻԵԿ 8-րդ հոդվածը, գտնելով որ պետական մարմնի կամ հիմնարկի որոշակի հաստիքի համար սահմանված աշխատավարձի կամ պարգևի չափի մասին տեղեկությունը անձնական տվյալ է և չի կարող տրամադրվել:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 4-րդ Բաժնի պահանջներով

Խնդրում եմ

Բեկանել թիվ ԵԿԴ/1671/02/12 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 02.10.2014թ. վճիռը, այն փոփոխել և հայցը բավարարել:

Կից ներկայացնում եմ՝

Պետական տուրքի վճարման անդորրագիր

Բողոքը կողմերին ուղարկելու մասին ապացույցներ

Բողոքը վճիռ կայացրած դատարան ուղարկելու մասին ապացույց

Ֆինանսների նախարարության հետ կնքված հաշտության համաձայնության տեքստն ու տրամադրված տեղեկատվությունը՝ տեղեկանքի ձևով:

«Ինֆորմացիայի ազատության
կենտրոն» ՀԿ ներկայացուցիչ՝ Կարեն Մեժլումյան